

Ջ Ե Կ Ո Յ Յ

Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԱՍԻՆ

Իրրեւ հետեւանք այն համաձայնութեան որ կայացաւ ներկայ տարուան սկիզբը, Դպրոցասէր Տիկ-նանց Ընկերութեան եւ Հայկական Բարեգործական Ընդհ. Միութեան միջեւ, որ սիրայօժար-ստանձնեց այդ բազմամեայ Հաստատութեան հովանաւորութիւնը, ինչպէս նաեւ այն խորհրդակցութեանց որ միատեղ կատարուեցան վերջերս յառաջիկայ վերակազմութեան ծրագրին մասին, հաճոյքն ունինք ծանուցանելու թէ որոշում կայացաւ ըստ առաջնոյն բարձրացնել Ռէնսի վարժարանին կրթական մակարդակը, վերադառնալով իր նախնական նպատակին որ կոչուեալ իսկ էր Դպրոցասէր Տիկնանց, Այսինքն, ծրագրուեցաւ, պահելով հանդերձ նախկինբարանի եւ արհեստանոցի ճիւղերը, վերահաստատել վարժուհիները, որ անցեալին մէջ ազգին տուած է հարիւրաւոր օժտուած եւ նուիրուած ուսուցչուհիներ, հայ աղջկանց նախա-կրթարաններուն համար:

Ինչպէս որ Դպրոցասէր Տիկնանց խառն վարչութեան շրջաբերական-գեկոյցին մէջ պարզուած է, պիտի հաստատուին նաեւ, հետզհետէ, կարուծելի, առեւտրական նախագիտելիքներու, մեքենագոր-ւեան եւ այլ մասնագիտական դասընթացներ, որպէսզի սանուհիներուն ապահովուի նաեւ գործնական կեանքի նախապատրաստութիւն, որպէս պահանջը ներկայ ժամանակներու, մանաւանդ օտարութեան մէջ, ուր պէտք է ինքնաբաւ ըլլայ հայ աղջիկն այլ:

Բայց եւ այնպէս սոյն գեղեցիկ ծրագրին յաջողութիւնը կախում ունի հայ ժողովուրդին եւ մասնա-ւորապէս կրթասէր ազգայիններու ցոյց տալիք նիւթական օժանդակութենէն, որովհետեւ ոչ որի զաղանիք է թէ Դպրոցասէր Տիկնանց Ընկերութիւնը ոչ մէկ Մեայուն եկամուտ ունի եւ ցարդ իր գոյութիւնը պահած է շնորհիւ կամաւոր նուիրատուութեանց տրուած ըլլալով որ աշակերտուհիներուն մեծ մասը ծրիաբար եւ փոքր մասն ալ անբաւարար թոշակներով կը պատսպարուին եւ կ'ուսանին:

Ներկայիս կոչ կ'ուղղենք, զխաւորաբար Միութեան Տեղական Մասնաժողովներուն եւ բոլոր ներ-կայացուցիչներուն եւ գործիչներուն, որ Ֆրանսայի մէջ թէ այլուր, զխաւորաբար Մերձաւոր Արեւելքի հայ զաղութներուն մէջ, այժմէն իսկ ջանադիր ըլլան արժանագրելու այն սանուհիները որ կը փափաքին հետեւիլ Դպրոցասէր Տիկնանց վարժարանին, որ արտասահմանի հայ աղջկանց միակ գիշերօթիկ կրթա-րանն է եւ ուր կրնան տոգմային աւոդջ դաստիարակութիւն մը ստանալ. ընտանեկան գուրգուրոտ շրջա-նակի մը մէջ:

Պէտք է յայտարարենք նաեւ որ ծրիավարժ սանուհիներու թիւը բոլորովին լրացած ըլլալով, տարե-կան նուազագոյն սակ մը պիտի գործադրուի, այսինքն 24 Անգլիական ոսկի 12 ամսուան համար, կէսը կանխիկ վճարելի եւ միւս կէսը տարեգլխին: Անոնք որ միջոց չունին պէտք է գտնեն Մարմին մը կամ պաշտպան մը որ բարեսիրաբար երաշխաւորէ այդ տարեվճարը կամ ինչ գումար որ կը ստանձնէ լրացնե-լու համար 24 ոսկին:

Բաբիշ, 25 Յուլիս 1937

Դ Ի Ւ Ա Ն Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ց Ե Օ Ր Է Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

ԾԱՆՈԹ. — Ուրիշ մանրամասնութեանց համար պէտք է դիմել, մինչեւ յառաջիկայ 15 Սեպտեմ-բեր, Դպրոցասէր Տիկնանց վարչութեան, հետեւեալ հասցէով. —

Association des Dames Arménienne Tebrotzassère
1, Boulevard du Nord
Le RAINCY (S. & O.), FRANCE.